«Լոնդոն Բիզնես Գրուպ» ՀՁ ՍՊԸ
ՀՀ, Երևան, Խորենացի 27ա/1
"London Business Group" JV LLC
27a Khotenatsi str., apt. 1, Yerevan, RA
Tel: (+37410) 541272, 560852
E-mail: audit@lbg.am
Web: www.lbg.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Թեքեյան կենտրոն» Հիմնադրամի Հոգաբարձուների Խորհրդին

Մեր կողմից իրականացվել է «Թեքեյան Կենտրոն» Հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշիռը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով մեզանից պահանջվում է բավարարել բարոյական վարքի կանոնները և պլանավորել ու անցկացնել աուդիտը՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:
Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից:

Ռիսկերի գնահատումները կատարելիս աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր՝ ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիքի ձևափոխման հիմքեր

Հիմնադրամի ղեկավարությունը և ՀՀ Պետ. Եկամուտների Կոմիտեն (այսուհետ՝ ՊԵԿ) ունեն տարաձայնություններ Հիմնադրամի 2013 թ-ի գործունեության հարկային դաշտի և դրանից բխող հարկային պարտավորությունների վերաբերյալ:
Մենք չենք ստացել Հիմնադրամի հարկային պարտավորությունների ճշտությունը հավաստող փաստաթուղթ՝ հաստատված ՊԵԿ-ի կողմից: Այս անորոշությունը մեզ հնարավորություն չի տալիս ձեռք բերել բավարար ապացույցներ 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի հարկային պարտավորությունների վերաբերյալ: Քանի որ դրանց մնացորդները և շարժը ներառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, մենք չկարողացանք պարզել տարվա շահույթի, զուտ ակտիվների և պարտավորությունների ճշգրտման անհրաժեշտությունը համապատասխանաբար համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Չևափոխված կարծիք

Մեր կարծիքով, բացառությամբ կարծիքի ձևափոխման հիմքեր պարագրաֆում նկարագրված հարցի ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի ֆինանսական վիճակը և նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Աուդիտի ղեկավար՝
Մարիամ Խոջայան

15 ապրիլի, 2014 թ.

Տնօրեն՝
Տիգրան Զորյան